



«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն շարունակում է իր աշխատանքները «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում:

2019թ-ի ապրիլի 5-ին ֆոկլուս խմբային քննարկումներ անցկացվեցին Դիլիջան քաղաքում շահագրգիռ կողմերի հետ՝ ՀԿ ներկայացուցիչներ, խոցելի և առավել խոցելի ընտանիքներ:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս խմբի ֆոկլուս խմբային քննարկումները իրականացվում էին համաձայն ՀՀ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի:

Ֆոկլուս խմբային քննարկումներին զուգահեռ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ փորձագետի և Սոցիալական Աջակցության Տարածքային Գործակալության դեպք վարողի կողմից իրականացվել են նաև տնայցեր, որոնց արդյունքում գնահատվել են նախապես ներկայացված 5 ընտանիքների կարիքները՝ նրանց անհատական զարգացման ծրագրերի կազմման և հետագա աշխատանքների իրականացման նպատակով:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

